ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ WWW.PROCUREMENT.AM ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱՅՔՈՒՄ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՄԱՏ ՌԵԺԻՄՈՒՄ ՌՈՒՍԵՐԵՆ և ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ՖՆ-ԲՄԾՁԲ-17/4

ք. Երևան

«13» դեկտեմբեր 2017թ.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավարի Է. Գևորգյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և և համատեղ գործունեության պայմանագրի հիման վրա հանդես եկող «Ավոռմիկ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Օհանյանի, «ԻՆՆԹԵՔ» ՍՊԸ-ն ի դեմս Ընկերության գլխավոր տնօրեն Է. Ավետիսյանի, «Միքայել Ավագյան» Ա/Ձ ի դեմս Մ. Ավագյանի, (համատեղ գործունեության պայմանագրի համաձայն սույն պայմանագրի կնքման լիազորությունները վերապահված են «Ավոռմիկ» ՍՊԸ-ին) (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է գնումների պաշտոնական www.procurement.am ինտերնետային կայքում հրապարակվող գնումների վերաբերյալ տեղեկատվության ավտոմատ ռեժիմում ռուսերեն և անգլերեն լեզուներով թարգմանության ծրագրային ապահովման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 69600000 (վաթսունինը միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում << օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը << ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն (ֆինանսական միջոցներ որակավորման չափանիշը բավարարում են «Ավռոմիկ» ՍՊԸ և «Միքայել Ավագյան» Ա/Ձ համատեղ): Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

7.7 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.10 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.12 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.14 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ֆինանսների նախարարություն	«Ավռոմիկ» ՍՊԸ
ք. Երևան, Մ. Ադամյան 1	ՀՀ, ք. Երևան, Դրոյի փ. 12 շենք, բն. 40
ՀՎՀՀ՝ 02629081	«Ինեկոբանկ» ՓԲԸ
ՀՀ	Հ/Հ 2052222067111001
ՀՀ ՖՆ աշխատակազմի	ՀՎՀՀ 00888275
գործառնական վարչություն	Տնօրեն
ՀՀ ՖՆ աշխատակազմի ղեկավար	
_____ Է. Գևորգյան	_____ Ա. Օհանյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«13» Դեկտեմբեր 2017թ. կնքված
ՀՀ ՖՆ-ԲՄԾՁԲ-17/4 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը**
1	48741100/320	Գնումների պաշտոնական www.procurement.am ինտերնետային կայքում հրապարակվող գնումների վերաբերյալ տեղեկատվության ավտոմատ ռեժիմում ռուսերեն և անգլերեն լեզուներով թարգմանության ծրագրային ապահովման ծառայություն**	ՀՀ դրամ	69600000	1	ք. Երևան, Մ. Ադամյան 1	Ծառայության մատուցումը իրականացվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա՝ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից

**** Գնումների պաշտոնական www.procurement.am ինտերնետային կայքում հրապարակվող գնումների վերաբերյալ տեղեկատվության ավտոմատ ռեժիմում ռուսերեն և անգլերեն լեզուներով թարգմանության ծրագրային ապահովման ծառայության**

Ներածություն

«Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված՝ հրապարկման ենթակա տեղեկատվության գերակշիռ մասը գնումների պաշտոնական www.procurement.am ինտերնետային կայքում հրապարակվում է հայերեն լեզվով:

Նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունները, անհրաժեշտություն է առաջացել նշված տեղեկատվությունը ամբողջությամբ հրապարակել նաև ռուսերեն և անգլերեն լեզուներով:

Գնման առարկայի տեխնիկական բնութագիրը

Գնումների պաշտոնական www.procurement.am ինտերնետային կայքում հրապարակվող ամբողջ տեղեկատվությունը, այդ թվում նշված տեղեկատվության

վերնագրերը հրապարակման պահին ավտոմատ ռեժիմում ռուսերեն և անգլերեն լեզուներով թարգմանության ծրագրային ապահովման մշակում և ինտեգրում www.procurement.am ինտերնետային կայքին:

Ծառայության մատուցման փուլերը և արդյունքների ներկայացման ժամանակացույցը

Ծառայության մատուցումը պետք է իրականացվի երկու փուլով, ներկայացնելով՝

1-ին փուլի ավարտին՝ պայմանագրի հիման վրա կնքվելիք համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում վերոհիշյալ ծրագրային ապահովման գործառութային մասնագրերը (տեխնիկական առաջադրանք), ինչպես նաև ծրագրային ապահովման լիարժեք գործունեության համար անհրաժեշտ սարքավորումների ցանկը և տեխնիկական բնութագրերը:

2-րդ փուլի ավարտին՝ Պատվիրատուի կողմից 1-ին փուլի հաշվետվությունը ընդունելուց հետո, այդ հաշվետվությունը հաստատվելու օրվանից երեք ամսյա ժամկետում, պետք է ներկայացվի 1-ին փուլի արդյունքում մշակված և ՀՀ ՖՆ կողմից հավանության արժանացած տեխնիկական առաջադրանքի հիման վրա մշակված, թեստավորված և www.procurement.am ինտերնետային կայքին ինտեգրված լիարժեք գործող համակարգ, ինչպես նաև 2-րդ փուլի հաշվետվությունը:

Պատվիրատուն կներկայացնի իր դիրքորոշումը կամ կընդունի՝

1-ին փուլի հաշվետվությունը՝ Ծառայությունը մատուցողի կողմից այն ներկայացնելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2-րդ փուլի հաշվետվությունը՝ Ծառայությունը մատուցողի կողմից այն ներկայացնելուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում:

Արդյունքները

Ակնկալվում է, որ կատարված աշխատանքների արդյունքում ՀՀ ՖՆ կունենա.

Առաջին փուլի հաշվետվությունը, ներառյալ Armeps/PPCM համակարգում փոփոխությունների կատարման համար գործառութային մասնագրերը: Հաշվետվության շրջանակներում համակարգի համար պետք է ներկայացվի գործառութային նկարագրությունը (տեխնիկական առաջադրանք):

Երկրորդ փուլի հաշվետվություն, այդ թվում.

- Ամբողջությամբ գործող համակարգ՝ թեստավորված և տեղադրված ՀՀ ֆինանսների նախարարությունում:
- Ծառայություն մատուցողի կողմից ներկայացված և ներդրված ծրագրային ապահովման ուղղումների կամ նոր տարբերակների նկարագրությունը, այդ թվում կատարված ծրագրային ուղղումների կամ նոր տարբերակների ծրագրային (source codes) կոդերը (համապատասխան նկարագրություններով) արտաքին (էլեկտրոնային) կրիչի վրա: Ընդ որում ծրագրային (source codes) կոդերը արտաքին (էլեկտրոնային) կրիչի վրա փակվում են ծրարի մեջ, որը Կողմերը երկկողմանի ստորագրում և կնքում են, յուրաքանչյուրի մոտ պահվում է փակ ծրարի մեկ օրինակ:

Ծառայությունը մատուցողին նախապես ծանուցելով՝ Պատվիրատուն սեփական նախաձեռնությամբ իրավունք ունի բացել Ծրագրի կոդերը հետևյալ դեպքերում.

- Ծառայությունը մատուցողի կողմից ծրագրի սպասարկման դադարեցման և Պատվիրատուի կողմից այլ կազմակերպության հետ ծառայությունների

մատուցման պայմանագիր կնքելու, ընդ որում, ստուգում իրականացնելու նպատակով Պատվիրատուն Ծրագրի կոդերը փոխանցում է նոր կատարողին:

- Ծառայությունը մատուցողի վերաբերյալ սննկացման գործընթացի մասին տեղեկությունների ի հայտ գալու պահից՝ անհապաղ:
- Մինչև նոր կատարողի հետ պայմանագիր կնքելը՝ Պատվիրատուի կողմից ծրագրի շահագործման ժամանակահատվածում ծրագրի թերությունների մասին հիմնավոր կասկածներ առաջանալու դեպքում:

Վերոգրյալ դեպքերում, եթե վերլուծության ընթացքում հաստատվի, որ Ծառայությունը մատուցողի մեղքով ծրագիրն իրականացնում է այնպիսի գործողություններ, որոնք նախատեսված չեն ծրագրի ֆունկցիոնալ նկարագրով և վտանգում են Պատվիրատուի տվյալների գաղտնիությունը, հասանելիությունը կամ ամբողջականությունը, կամ որևէ կերպ խոչընդոտում են ծրագրի անխաթար աշխատանքին, ապա Պատվիրատուն իրավունք ունի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Ծառայությունը մատուցողից պահանջել պատճառված վնասների հատուցում և ծրագրի վերականգնում:

Անհրաժեշտության դեպքում Պատվիրատուն իրավունք ունի հրավիրել նաև անկախ փորձագետների և իրականացնել կոդերի վերլուծություն:

Նոր կատարողի կողմից Ծրագրի կոդերը ստուգվելու և դրանցում անհամապատասխանություններ չհայտնաբերվելու դեպքում Ծառայությունը մատուցողի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունները դադարում են:

- տվյալների շտեմարանի դամփը և կառուցվածքի նկարագրությունը
- համակարգի տեղակայման ձեռնարկը
- համակարգի ընդունման-հանձնման հաստատված ակտ

Ծառայությունները մատուցողի բոլոր հաշվետվությունները պետք է ներկայացվեն էլեկտրոնային եղանակով և երկու տպագիր օրինակով:

Փուլ 2-ի վերջում նախանշվող ենթակամակարգի թեստավորումը պետք է իրականացվի ավարտուն, ինտեգրված համակարգի վրա: Համակարգը կհամարվի հաջողությամբ ներդրված, եթե անխափան կերպով կապահովի Տեխնիկական առաջադրանքում սահմանված պահանջների կատարումը:

Երաշխիք

Ծառայությունները մատուցողից պահանջվում է տրամադրել առնվազն 2 տարվա երաշխիքային սպասարկում՝ հստակ պլանով՝ ներդնելու երաշխիքային սպասարկման միջոցներ:

Ծառայությունները մատուցողը երաշխիքային սպասարկման ավարտին պատվիրատուին պետք է տրամադրի նաև համակարգի երաշխիքային սպասարկման ընթացքում կատարված ծրագրային փոփոխությունների վերջնական ծրագրային (source codes) կոդերը (համապատասխան նկարագրություններով) արտաքին (էլեկտրոնային) կրիչի վրա: Ընդ որում ծրագրային (source codes) կոդերը արտաքին (էլեկտրոնային) կրիչի վրա փակվում են ծրարի մեջ, որը Կողմերը երկկողմանի ստորագրում և կնքում են, յուրաքանչյուրի մոտ պահվում է փակ ծրարի մեկ օրինակ:

Ծառայությունը մատուցողին նախապես ծանուցելով՝ Պատվիրատուն սեփական նախաձեռնությամբ իրավունք ունի բացել Ծրագրի կոդերը հետևյալ դեպքերում.

- Ծառայությունը մատուցողի կողմից ծրագրի սպասարկման դադարեցման և Պատվիրատուի կողմից այլ կազմակերպության հետ ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելու, ընդ որում, ստուգում իրականացնելու նպատակով Պատվիրատուն Ծրագրի կոդերը փոխանցում է նոր կատարողին:

- Ծառայությունը մատուցողի վերաբերյալ սննկացման գործընթացի մասին տեղեկությունների ի հայտ գալու պահից՝ անհապաղ:
- Մինչև նոր կատարողի հետ պայմանագիր կնքելը՝ Պատվիրատուի կողմից ծրագրի շահագործման ժամանակահատվածում ծրագրի թերությունների մասին հիմնավոր կասկածներ առաջանալու դեպքում:

Վերոգրյալ դեպքերում, եթե վերլուծության ընթացքում հաստատվի, որ Ծառայությունը մատուցողի մեղքով ծրագիրն իրականացնում է այնպիսի գործողություններ, որոնք նախատեսված չեն ծրագրի ֆունկցիոնալ նկարագրով և վտանգում են Պատվիրատուի տվյալների գաղտնիությունը, հասանելիությունը կամ ամբողջականությունը, կամ որևէ կերպ խոչընդոտում են ծրագրի անխաթար աշխատանքին, ապա Պատվիրատուն իրավունք ունի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Ծառայությունը մատուցողից պահանջել պատճառված վնասների հատուցում և ծրագրի վերականգնում:

Անհրաժեշտության դեպքում Պատվիրատուն իրավունք ունի հրավիրել նաև անկախ փորձագետների և իրականացնել կոդերի վերլուծություն:

Նոր կատարողի կողմից Ծրագրի կոդերը ստուգվելու և դրանցում անհամապատասխանություններ չհայտնաբերվելու դեպքում Ծառայությունը մատուցողի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունները դադարում են:

Գաղտնիություն

Ծառայություն մատուցողը հանձն է առնում գաղտնի պահել ողջ այն տեղեկատվությունը, որը հանրամատչելի չէ և չի ստանձնի որևէ այլ հանձնարարություն, որը կհանգեցնի շահերի բախման գերակա հանձնարարության նկատմամբ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ֆինանսների նախարարություն	«Ավռոմիկ» ՍՊԸ
ք. Երևան, Մ. Ադամյան 1	ՀՀ, ք. Երևան, Դրոյի փ. 12 շենք, բն. 40
ՀՎՀՀ՝ 02629081	«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ	Հ/Հ 2052222067111001
ՀՀ ՖՆ աշխատակազմի	ՀՎՀՀ 00888275
գործառնական վարչություն	Տնօրեն
ՀՀ ՖՆ աշխատակազմի ղեկավար	
Է. Գևորգյան	Ա. Օհանյան
(ստորագրություն)	(ստորագրություն)

Հավելված 3
«13» Դեկտեմբեր 2017թ. կնքված
ՀՀ ՖՆ-ԲՄՕՁԲ-17/4 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «___» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին. Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«13» դեկտեմբեր 2017թ. կնքված
ՀՀ ՖՆ-ԲՄԾՁԲ-17/4 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված 10
«ՀՀ ՖՆ-ԲՄԾՁԲ-17/4» ծածկագրով
բաց մրցույթի հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի կատարման ապահովում)

ք. Երևան

«12» դեկտեմբերի 2017թ.

«ԻՆՆԹԵՔ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն՝ Էդուար Ավետիսյանի (ՆՔ՝ 000599977, տրված՝ 20.11.2013թ., 005-ի կողմից, ՀԾՀ՝ 2109950617), որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է ՀՀ ֆինանսների նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ *ՀՀ ՖՆ-ԲՄԾՁԲ-17/4* ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ <<Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների>>:

1.3 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը (այսուհետ՝ պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիր) ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին (այսուհետ՝ Բանկ)՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

1.4 Բանկը պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է կատարման՝ Պատվիրատուի կողմից սույն տուժանքի համաձայնագրի և գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման փաստը հաստատող փաստաթղթի բնօրինակները, որոնք նշվում են պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում, Բանկին տրամադրվելու դեպքում:

1.5 Պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.6 Սույն համաձայնագիրը և կից պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱԲՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և վավեր է Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

«ԻՆՆԹԵՔ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Վարդանանց փակուղի 8, 4-րդ հարկ, 404 սենյակ
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050022467621001
ՀՎՀՀ 02668665

Տնօրեն՝ Էդուարդ Ավետիսյան ----------
(ստորագրություն)

Կ.Տ.

1.

ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ՝ N

(պայմանագրի կատարման ապահովում)

2. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

3. Ընկերություն (այսուհետ՝ վճարող)՝ «ԻՆՆԹԵՔ» ՍՊԸ

4. Վճարողի բանկը՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ

5. Վճարողի հաշվի համարը՝ 2050022467621001

6. Վճարողի ՀՎՀՀ՝ 02668665

7. Վճարողի ՀԾՀ՝

8. Շահառու՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

9. Շահառուի ՀՎՀՀ՝ 02629081

10.Շահառուի բանկը՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

11.Շահառուի հաշվի համարը /հշ.N/ 900008000474

12. Գումարը թվերով և բառերով՝ **6960000 (վեց միլիոն ինը հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ**

13. Արժույթը (բառերով և կոդով)՝ Հայկական դրամը (AMD)

14. Գործարքի /վճարման/ նպատակը՝ պայմանագրի ապահովում՝ տուժանքի ձևով

15.Գնման ընթացակարգի ծածկագիրը *ՀՀ ՖՆ-ԲՄԾՁԲ-17/4*

16.Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը

17. կից՝--- էջ

19.ա. Շահառուի ստորագրությունները՝ /_____/ /_____/ Կ.S. 19.բ.	18.ա. Վճարողի ստորագրությունները՝ /_____/ /_____/ 18.բ. Կ.S.
Կատարված է շահառուի բանկի կողմից 20.ա. /_____/ /ստորագրություն/ 20.բ. Կ.S. "___" ___ 20___ թ.	Կատարված է վճարողի բանկի կողմից 21.ա. /_____/ /ստորագրություն/ 21.բ. Կ.S. 22.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

«ԻՆՆԹԵՔ» "ИННТЕК" "INNTECH" 02668665

/ Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր կավերապայմանների և լրացման կարգի»: